

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Զ Ա Ր Թ Ն Ո Ւ Մ Ը

Ոչ ոքի ուշադրութենէն չի կրնար վրիպիլ արտակարգ կարեւորութիւնն ու մեծ նշանակութիւնը՝ 17 մայիսին, Պօսթոն անդի ունեցած Հնչակեան հրապարակային ժողովին, որուն մէկ հակիրճ նկարագրութիւնը կուտանք մեր այս համարին մէջ:

2000ի չափ՝ ամէն սեռէ, ամէն դասակարգէ ու ամէն դաւանանքէ Հայեր միասին հաւաքուած՝ Հընչակեան Միութիւնը տօնեցին այդ օրը, անլուր, խեղայեղ ոգեւորութեամբ մը:

Մեր յեղափոխական պատմութեան մէջ, 95ի Սահմանադրութեան անմոռանալի տարեդարձէն ի վեր, առաջին անգամն է, որ ժողովրդային այսօրինակ հօկայ ու հօյակապ միաձայնութիւն մը կ'իրականանայ յեղափոխական դրօշին տակ:

Կ'արժէ, որ արձանագրենք մայիս 17ը, որովհետեւ Հայ Յեղափոխութեան առջև բացուած նոր շրջանին է՛ն փառաւոր թուականներէն մէկն է ան, — որովհետեւ աւետաւոր թուականն է ան Հայ Ճողովուրդին յեղափոխական զարթումին:

Ընդհանուր լքումի ու անբարոյացման տխուր ու դառնակօկիծ շրջանէն վերջ, առաջին անգամն է, որ Հայ Ճողովուրդը, հաւատքի ու գիտակցութեան բուն թափով մը, կը թօթուրտայ, կը սթափի ու կը շտապէ զէպի իր փրկութեան կոխին յառաջապահ բանակը, կը խառնուի անոր շարքերուն, կ'եղբայրանայ, կը զրկընդիսանուի իր հարազատ ախոյեաններուն հետ, ու անոնց կը բերէ իր անպայման ու անհաշիւ խանդաղատանքին ու վստահութեան անդիմադրելի զօրավիզը:

2000 Հայեր, տասնեակ հազարներու հոգին արձագանքելով՝ բունցեն իրենց հաւատքը կ'երգուըննան յեղափոխական եղբայրութեան վրայ եւ իրենց յարումը՝ յեղափոխական մաքառումին:

Մտաշարժ ու գերազանցապէս շինիչ չէ՛ Հնչակեան Միութեան շուրջը պոռթկացող ժողովրդային այս ամեհի խոյանքը:

Եւ սակայն, կ'երևի թէ, տակաւին կը գտնուին տեսակ մը՝ վերջնականապէս ապականած, անդառնալիօրէն փճացած, անկանգնելիօրէն ինկած պիղծ հոգիներ — ասելութեան ու վատութեան անցեայի մը վերջին թափթփուքները — որոնք հրէշային, հակամարդկային երեւոյթը կ'ընծայեն տխրելոռ, փրփրալու, ոռնալու այսպիսի շքեղ իրականութեան մը հանդէպ, ուսկից մեր ցեղին, մեր գոյութեան, մեր ազատագրութեան թշնամին միայն դժգոհ պիտի կրնար մնալ: Մենք կը հասկնանք դժգոհութիւնն ու վրդովումը Տաճիկին: Բայց ի՞նչպէս ըմբռնել, ի՞նչպէս որակել կօկիծն ու մոլեգնութիւնը Քայերոս, որոնք օաճուկեցնող միամըտութիւնն ալ ունին ինքզինքնին յեղափոխական հատալու:

Պօսթոնի Հնչակեան տօնը փառաւոր նուիրագործունէ է յեղափոխական Միութեան զաղափարին, ու առաջին սրտապնդող մղումը՝ որով Հայ Ճողովուրդը՝ իր մեղապարտ անշարժութիւնը թօթափած՝ կը փութայ շուրջը բոլորուիլ անո՛նց, որոնք կենդանի մարմնացումը կը հանդիսանան իր արդար ու անձկազին բաղձանքներուն:

Ազգային բարոյական կազդուրումի, յեղափոխակ սնզարթնումի այս հանդիսաւոր ու պատմական բուլէին, շահախնդրութեան, նենգութեան ու մատնութեան ուխտաւորներուն օրհասական հեծուկը չէ՛. անշուշտ, որ պիտի կրնար խանգարել անվկանդ ներգաշնակութիւնը յեղափոխական համերգին:


Պօսթոնի Հնչակեան հանդէսը վերջինը չպիտի ըլլայ անտարակոյս այն տօնակատարութիւններուն, ուր Ճողովուրդին ու Յեղափոխութեան հարօսանիքը պիտի փառաւորուի, խորհրդանշանուի:

Ու մենք վստահ ենք, որ երգերէն, ծափերէն ու ցնծազին կեցցէներէն վերջ ալ, և ա՛յն ատեն մանաւանդ, Հայ Ճողովուրդը պիտի զիանայ, պիտի շարունակէ, միևնոյն վեհանձն խանդավառութեամբ, միևնոյն կորովի հաւատքով, ու անսպառ ու գիտակից անձնուիրութեամբ մը, գործնական, անվիճելի ապացոյցները տալ իր յեղափոխական պարտաճանաչութեան:



ԱՐԱՍ ԽՕՍԲԵՐ

ՄԵՐ ԴԻՐՔԸ



Անոնք, որ չեն յափշտակուած իրենց պորտերուն յարատև ու տարածքով հայեցողութեամբը, անոնք, որ անեօական տկարութիւնն ունին իրենց չորս զին նայելու, հանրային գործերով քիչ շատ հետաքրքրուելու, անոնք մասնաւորապէս, որ կաթողին խնամքն ունեցած են ուշադրութեամբ հետեւելու մեր ազգային կեանքին բոլոր յատկանշական երևայթներուն՝ անոնք չեն կրնար զարմանալ, յանկարծակիի գալ, այս միջոցիս, վարկաբեկութի ու անուանարկութեան խօսք ու մոլեղին ճիւղերուն առջև՝ զորս Հնչական Կուսակցութեանն ու Հընչական վարիչներուն պէմ կը փորձեն վերստին և որոնք զատապարտուած են, անգամ մըն ալ, Հնչականութեան բարոյական անխախտելի պատուարներուն վրայ խայտառակօրէն խորտակուելու:

Չէ՛, անակնկալի մը, նորութեան մը շահեկանութիւնն իսկ չունի այս ամօթայի երևայթը, որուն ի տես՝ ամէն ուշիմ ու խղճամիտ Հայ պիտի չկրնայ զօպել զգօւախառն հեգնութեան ժպիտ մը ու արհամարհօտ զըզուանքի բառ մը:

—Նօրէ՛ն...

Որովհետև հին ծանօթ մըն է, որ նօրէն երեան կուգայ, իր տղամթաթալ գծնէ դուրսը զուրս կը ցցէ խաղբութեան վարագոյրին ետեւէն, կը ծամածռէ, կը լորձնօտի, կը հայհօյէ, կը ծահահօտէ—ամենուն ծանօթ, ամենուն պժգալի՝ հին, անփոփոխ, քօտմեելի Դըրութիւնն է, որ դարձեալ ու առաւել քան երբէք զիտակից վատութեամբ, անաչել քան երբէք կամաւոր ու հաշուուած նենգութեամբ, ուժգնօրէն, յուսահատօրէն գործագրութեան կը դրուի, իր երախտաւոր հեղինակներուն բարձրագոյն հրամանովը, իր հաւատարիմ աւանդապահներուն պաշտօնական վերին հսկողութեան նը տակ, ու ասոնց ստորադաօ միջնորդներուն ու ծառաններուն խնամօտ ու պիղծ ձեռքերովը: —Օ՛ փառաւոր, իսէալ կազմակերպութիւնը Սօստին, Զրպարութեան, Ատելութեան «հայրենասիրական», «յեղափոխական» բրօքականտին համար...



Ինչո՞ւ սակայն այս յանկարծական շղթայագերջումը Դրութեան օտրուկ ու վարձկան վոհմակին:

Անշուշտ, Դրութիւնը չզարեցաւ երբէք իր նեխիչ ու ապականիչ գործը շարունակելէ: Բայց չէ՛ մի որ իր է՛ն մոլեռանդ ու է՛ն շնական ախոյեաններն իոկ ստիպուեցան օանձ մը զնել մետուելու, պղծելու իրենց ախտաւոր մոլուցքին, գերմարդկային ճեգեր ըրին մեղմելու, զօպելու՝ քօտութեան ու մատնութեան իրենց անյազ ծարար ու չափաւորելու՝ վարկաբեկութի եւ անուանարկութեան իրենց անօպառ եւ ուխտուած փոխումը: Չէ՛ մի որ, տարիէ մը ք վեր, կազդուրիչ ու բարեբար շունչ մը անցեր էր հայ հանրային մթնոլորտէն, ու հայ ժողովուրդը կրցեր էր յուսալ վայրկեան մը, թէ կուսակցական կիրքերն ու եղբայրազաւ ոգորումները վերջ մը պիտի գտնէին, թէ ազգային ցաւերուն ու վերքերուն օտիպօղական ամօքու մին երկիւղած մտահօգութիւնը և ազգային գոյութեան կոխին ջերմեռանդ գիտակցութիւնը պիտի վերջապէս մղէր հայ յեղափոխականները փոխադարձ լաւագոյն վերաբերումներու, աւելի վեհանձն ու աւելի համբաւալի զգացումներու և՛ հետզհետէ՛ դէպի գերպոյն գրկընդհանուումը Հայ Յեղափոխական Եղբայրութեան:

Այսպէս մտածեց հայ ժողովուրդը ու կրցաւ պահ մը անձնատուր ըլլալ այս սրտապնդող լաւատեսութեան: Այս սրտագին ակնկալութիւններով սարօռացինք և մենք, ու ասկից իսկ ըսուեցան, կրկնուեցան մտացումի ու խաղաղութեան յուզուած ու սրտաբուխ խօսքերը:

Անցեալը, իր բոլոր տրտմութեամբն ու ամօթովը, թաղելու սրտցաւ որոշումը սուեր էինք՝ օա անպրդուելի համոզումով, թէ անոր վերյուշումը ու անսր պիտի կրայ վիճիլ յամենաչու, զիրար քաշկոտելու, իրարու ուս պատասխանատուութիւններ բեռցնել ճարտարօրէն ունայն յամառութիւնը առաջուց, գիտակցաբար, անկարելիութեան զատապարտել պիտի նշանակէր՝ հաշտութեան ու եղբայրութեան մեծ ու կենսական գործը:

Ու սպասեցինք, ակնդէտ, հոգեկին: Յօսանքափ եղանք: — Ո՛չ, անշուշտ: Մեր անձկազին սպասումը չվերջացաւ պատրանքով ու հիասթափութեամբ: Մեր ձայնը լսուեր էր, մեր կոչը արձագանգ գտեր էր համանման տեղանքններով ու համախորհուրդ ձգտումներով տագորուած յեղափոխական սրտերու մէջ: —Եւ ահա Հնչական Միութեան իրականացումը հասաւ շքեղօրէն պսակել մեր յոյսերն ու ջանքերը, կազդուրեց, մխիթարեց մեզ: Ու մեզի հետ, ամբողջ հայ յեղափոխական ժողովուրդը թունգ ելաւ, խանդաղափեցաւ, խանդավառեցաւ ամենուրեք:

Սյս առաջին յաջողութենէն սրտապնդուած, քաջալերուած՝ կրցանք, ուզեցինք վերօտին յուսալ, պահ մը, թէ վերջին քայլը դժուար չպիտի ըլլար այլ ևս՝ դէպի յեղափոխական ամբողջական եղբայրութիւնը, և մեր այս կամաւոր ու որացաւ լաւատեսութիւնը

չվարանեցանք ցոյց տալ՝ Հնչակեան Միութիւնը հայ ժողովուրդին աւետող մեր յայտարարութեան մէջ իսկ:

Կ'երևի թէ շարաշար կը սխալէինք:

Հնչակեան Միութեան փառաւոր իրականացումը, որ հայ հասարակութեան չէղոք ու անտարբեր մասն իսկ կը ցնցէ, կ'ոգևորէ, ո՛չ միայն սպասուած բարերար ու համոզիչ ազդեցութիւնը չունենար տեսակ մը յեղափոխականներու վրայ, այլ մինչև անգամ դժգոհութեան ու օրտնեղութեան պատճառ մը գարձած ըլլալ կը թուի անոնց, անխորժ ու անհարկի անակնկալ մը՝ որ կը մղէ զիրենց խորթ ու ատեցող նայուածքներ ուրոյն ղէպի Հնչակեան կուսակցութիւնը:

Երէկ, այդ մարդիկը, որոնք «յեղափոխական» անունին տակ պիտի ուզէին ծածկել տառապաշտ զբաղի իրենց պատիկ, անգոյն, կծկտած հոգիները, մեր կտրուկ ու օրաբաց հրաւերներուն ի պատասխան, ճղճիմ ու տիրացու բծախնդրութեամբ մէ, «հետևողականութեան» ու «պաշտօնական ձեւակերպութեան» օտարուկ ֆոնմիւնքեր կը յամառէին թօթովել: Չմայլելի յեղափոխականներ... եղբայրական ձեռքեր իրենց երկնցած կը տեսնէին ու ճիզօւթական խուսափուկ ու բռնազբօսիկ պատճառաբանութիւններով երեսնին անդին դարձուցած՝ իրենց բոլոր ձեռուրներն ու հոգիներն ալ կը կարկառէին՝ իր անխմտ կեանքը չէղքութեան նուիրած ու հիմակ ալ Յեղափոխութեան մէջ իր տխուր ծերութեան ապաւէնը փնտոող արգասատելի էակի մը:

Այսօր սակայն այդչափ մը ստորնութեամբ չեն բաւականանար: Իրենց համար բուն խնդիրը Միութենէն խուսափելուն մէջ չի կայանար միայն: Պէտք է պահել նաև Միութեան շերտ կուսակցի զիմակը և մանաւանդ՝ ամէն դեմով՝ խանգարել նկրտիլ Հնչակեան Միութեան յառաջ բերած ազգային ընդհանուր խանգարմանութիւնը:

Եւ ահա՛ Դրութիւնը—վարկաբեկումի և գայթակղութեան այդ գծիտային մեքենան—կը սկսի գործադրուիլ վերստին, իր յայտնի ու զարանած պաշտօններուն միահաղոյն ու մոլեգին օժանդակութեամբը:

* * *

Ի՞նչ պիտի ըլլայ մեր զիրքը ատելութեան, քրտութեան ու վատութեան այս նոր ու յուսահատ ժայթքումին հանդէպ:

Բարոյական բարձրութեան վրայ, ուր մեզ կը հաստատեն կատարուած ու շարունակուելիք նուիրական պարտականութիւններ, հագարներու վտտահութեամբն ամբացած ու անմատչելի ամէն դարերու ու ամէն գետնաքարը նենգութիւններու՝ պիտի զիջանքնք հրքքէ

պատասխանել վարերէն, տղմուտ ու գարչահոտ վարերէն մեզ ուղղուած նախատինքներու:

Չէ՛, անտարակոյս: Ատիկա շատ մեծ պատիւ մը պիտի ըլլար Դրութեան վարձկաններուն, պատիւ մը գոր հագիւ կը համարձակին ակնկալել: Ատով, անգիտակից հաճոյակատարութեամբ մը, գոհացում տուած պիտի ըլլայինք իրենց մէկ գերագոյն բաղձանքին, —գայթակղութիւններ ստեղծել, ատոնց պատասխանատուութիւնը իրենց հետ բաժնել տալ մեզի, եւ այդպէսով՝ հանրային խղճմտանքը պղտորել, ժողովուրդին ուշադրութիւնը տարտղնել, զայն հեռացնել օրուան մեծ ու կենսական հարցերէն:

Եւ յետոյ, առանց այս նկատուիներուն ալ, մենք ինքզինքնիստ անկարող կը զգանք հանգուրծելու ամբողջ ամօթալի պղտիկութեանը, որ պիտի կայանար՝ մէկ քանի սղորմելի ծառաներու հետ չափուելուն մէջ, երբ գիտենք մանաւանդ, թէ անոնք տաժանելիօրէն իրենց կեանքը կը շահին հանրային թունաւորիչի ահաւոր արհեստովը, որ կը զատապարտէ զիրենք՝ պատտա մը հացի փոխարէն՝ իրենց փտութեան հոգիները փոխել շարունակ:

—Սեւացրէք...
Հրամանը կը հասնի, ու հանրային թունաւորիչը —հակառակ «ապակեդրոնացում»ի գաւեշտական առասպելին—իր պետերուն կամքին կը հնազանդի մեքենաբար, ծառայաբար:

Դիւրին, այլ տարօրինապէս նուաւտացուցիչ բան մը չունի՝ հալածանքը հանրային թունաւորիչին՝ մարդկութեան այս է՛ն կեղտոտ ու վարնոց տիպարին դէմ, որ իր խաղքութեան գերագոյն թախանձանքովը արգահատանք շարժելու կը հասնի:

Արդէն, հանրային թունաւորիչներու դէմ այդ մաքառումը ունայն ճիգ մը պիտի ըլլար պարապի մէջ թափուած: Անոնց գիտակից, կամաւոր, արհեստական ցածութիւնը փառտերով ու տրամաբանութեամբ յաղթել, զինաթափ ընել յուսալը՝ անուագն միամբտութիւն պիտի ենթադրէր: Որովհետև հանրային թունաւորիչները՝ իրենց տէրերուն նշանակած անհատները կամ հաւաքական մարմինները ցեխտտելու պիղծ պաշտօնէն զուրս՝ գոյութեան ո՛ր և է իրաւունք չեն կրքնար ունենալ: Անոնք վճարուած են ժողովուրդին հոգին թունաւորելու համար:

Միեւնոյնը չէ՛ սակայն Դրութեան հրամանատարներուն պարագան: Անոնց հետ պէ՛տք է որ անողք ըլլանք մինչև վերջը, ու պարտականութիւն մըն է մեզի շարունակ վար առնել անոնց զիմակները, անոնց որ քուլիսներուն մէջ կը պահուրտին զողահար ու միջնորդներ, ծառաներ—հանրային թունաւորիչները—առաջ կը քշեն վատօրէն:

Անշուշտ, ինքնին արդէն, կուսակցութիւն մը, որ այս

ցիլոցներուն կը զիջանի, այս տեսակ անարգու նե-
մուկներու կը կոթնի՝ շիփ շիտակ կործանումին ճամբան
ձեռք կ'առնէ, կուտակցութիւն մը, որ այս դրութիւնը
չուզէր ձգել՝ զիտակցաբար կամ անզիտակցաբար անձ.
նասպանութեան կը վազէ: Օր մը կուգայ, ուր ամբոխին
համբերութիւնը կը օպատի, ուպոգանքի անդիմագրելի հա-
կազգեցութեամբ մը, կամ Դրութեան թոյնին չափա-
զանցած յագուրդէն ոիրտը խառնուած՝ ամբոխը կը
դառնայ անոնց դէմ, որոնք շահագործել կը յանդգնին
իր էն օտոր ու էն ուսմիկ բնագոյնները ու իր մահացու
արհամարհանքին մէջ կը խեղդէ, կը չքացնէ զանոնք:

Եւ արդեօք պէտք ունինք մենք ժողովուրդին այդ
իրաւունքը կապտելու, պէտք ունինք կանխելու անոր
անվրիպելի արդարութիւնը:

Ժողովուրդը արդէն օկօսած է տայ անոնց ջախջա-
խիչ պատասխանը: Երէկ Պօսթոն, վաղը այլուր, միւս
օր ամէն տեղ, ժողովուրդը դեռ պիտի տայ ատանկ
վիթխարի պատասխաններ...:

Ժողովուրդը, իր պարզուկ ու հուժկու ողջմտու-
թեամբը պիտի դատէ, ինչ որ կայ աւելորդ, ապուշ ու
զաւաճան՝ Հնչակեան վարիչները անուանարկելու ա-
րարքին մէջ:

Աւելորդ ու ապուշ ճիգ, արդարեւ, քանի որ Հնչ-
ակեան վարիչները, առջի օրէն, յայտարարեցին, թէ
պատրաստ են քաշուելու ամէն գերակշիռ դերէ, եթէ
ատիկա՝ Միութեան իրականացումին համար անհրաժեշտ
պայման մը նկատուէր:

Հնչակեան վարիչներուն նպատակը յեղափոխական
կուտակցութեանց վարիչները միացնել չէր կրնար ըլլալ
բնականաբար, այլ յեղափոխական կուտակցութիւնները
րիացնել—այսինքն միացնել, ի մի ձուլել այդ կուտակ-
ցութեանց անջատօրէն ներկայացուցած բոլոր նիւթական
ու բարոյական ուժերը:

Հօ՛տ, յեղափոխական մաքառումին էութիւնն ապա-
հովող այդ տարրերուն միացումին մէջն է որ Միու-
թիւնը մեզի համար իմաստ մը տանի: Վարիչները մի-
անալով, քով քովի գալով, իրարու երես նայելով՝ ինչ
պիտի կրնային ընել, առանց կուտակցական զանգուած-
ներու ձուլումին:

Արդ, Դրութեան վարձկան՝ հանրային թունաւու-
րիչները պիտի կրնան երբէք յուսալ—առանց յիմարա-
նօց առաջնորդուի թախանձելու—թէ կարելի ըլլայ իրենց
ամբողջ Հնչակեան կուտակցութիւնը, ամբողջ Հնչակեան
Քանգուածը ցեխոտել՝ Միութիւնը չուզող իրենց տէ-
րերուն պատրական չքմեղանք մը հայթայթելու համար:
Ո՛չ, անշուշտ: Ատանկ հսկայ այլանդակութիւն մը ի-
րենցմէ էն զիւհարն ալ պիտի չհամարձակէր երագելու
Ռւրի՞ն:

Ինչու ճշակտոր ելլել Հնչակեան վարիչները
ձեռոնքու ախտաւոր ցնորքով, երբ անոնք ինքնաբերաբար

կը յայտարարեն, թէ իրենցմէ հեռու, անդին, ուրիշ
զոներ պէտք է զարնել, գտնելու համար այնպիսի
մարդիկ, որ ընդունակ ըլլան իրենց անձնական ուսմիկ
ու զողահար տեսակէտէն առաջնորդուիլ Միութեան
Խնդրին, ինչպէս ամէն հանրային կենսական խնդրի մէջ:

ԶԻ ՄՈՒՆԱՆՔ

Ոչ մէկուն համար զաղտնիք մըն է, թէ ճնշուած,
հարստահարուած ու հալածուած ժողովուրդներ ազա-
տութեան ու անկախութեան հասած են և կը հասնին
բռնի, օտիպողական միջոցներով, յեղափոխական
գործով:

Պատմութեան մէջ նշանակուած չենք գտնել ազգ
մը՝ օտար ու բռնաւոր լուծի տակ կաշկանդուած՝ որ
կարողացած ըլլայ բարենորոգում կամ ինքնավարութիւն
ձեռք ձգել՝ միմիայն դիւանագիտական շրջանակներու
զոները բաղխելով, աղերասգիր պտտցնելով:

Անմտութիւն է օպատել որ տիրապետող ու ճնշող
կառավարութիւն մը ինքնաթափօրէն իր հպատակ-
ստրուկներուն դրութիւնը բարելաւել փորձէ: Ամէն
բռնաւոր կառավարութիւն՝ իր շահը՝ իր գոյութիւնը
նոյն իսկ, կը փնտռէ, կը տեսնէ զլիւարաբար այն
անարգար ու անողոք միջոցներուն մէջ, որոնք իրեն
հնարաւորութիւն կուտան ստրկութիւնը խորաբամտ
տարածել ու ատանկով իսկ կեղեքել, շահագործել ժո-
ղովուրդին մասաւոր, բարօրական, ֆիզիքական բոլոր կա-
րողութիւններն ու ընդունակութիւնները:

Մասնաւորելով մեր խօսքը հայ ազգին վրայ, փու-
թանք անմիջապէս ըսել որ անիկա՝ տասնեակ տարի-
ներու դառն փորձառութիւններով՝ խորապէս և անդառ-
նալիօրէն համոզուած է այն պարզ ու անժխտելի ճշ-
մարտութեան, թէ օտար տէրութիւնները յիշատակա-
գիրներու ազդեցութեան տակ չէ որ պիտի մղուին
նպատատար ու վճռական միջամտութիւն մը փորձելու:
Ոչ մէկ բան կրնայ պետութեանց ուշադրութիւնը գրա-
ւել, եթէ անոնց շահերը վտանգող հանգամանք մը
չունի և կամ դէթ ամենաշնչին շահու մը հմայքը չի
կրնար ներկայացնել:

Հայ ժողովուրդին վերջնական և անխուսափելի մահը
կ'ընկօի ճիշդ այն օրէն—ու ատիկա շատ ըսինք— երբ
իր միակ յոյժը պետութեանց բարեացակամութեանը
վրայ դրած՝ կը հեռանայ յեղափոխական գործունէու-
թեան ճամբէն:

Պերլինի դաշնադրութեան ՅԱրդ յօդուած մը կայ,

իրաւ, որ հայկական խնդիրը միջազգային իրաւունքի կարգն անցուցած է եւ որով թիրք կառավարութիւնը պարտականութիւն կրօտանձնէ բարենորոգումներ մտ- ցնել Հայաստանի մէջ և հայ ժողովուրդի ահաւոր ու անդադրում տառապանքներուն, զրկանքներուն ու կե- ղեցումներուն վերջ մը տալ:

Այդ բարեկարգութիւններու գործադրութիւնը պա- հանջելու, անոր վրայ հսկելու հանգիստաւոր խոստումը ըրած են եւրոպական պետութիւնները, որոնք այսօր ամէն բան մոռցած ըլլալ կը թուին: Անոնք իրենց այդ խոստումը պիտի յիշեն միայն այն ժամանակ, երբ պէտք ունենան Երլազդի վրայ իրենց շահերուն տեսակէտով ճշոււմ մը բանեցնելու: Իւրաքանչիւրն իր կարգին կը սկսի հայասիրութիւն կեղծել, արդարութեան ախոյեան դառնալ, և «Պեղինի դաշնագրութիւն», «հայկական բարենորոգում» բառերը իր շրթունքէն կախած՝ օպառ- նալից ներկայանալ սուլթանին, երբ նպատակ ունի անոր պոչէն մագ մը փրցնել իր հաշուոյն:

Ու եթէ փճանայ, բնաջինջ իսկ դառնայ հայ ցեղը, ոչ ոք կը շարժի, առանց սեփական շահու մը ապահո- վութիւնը նախապէս երաշխաւորած տեսնելու, կամ սե- փական կորուստի մը առաջն առնել հարկադրուած ը- լալու:

Հայ ժողովուրդը, հայ յեղափոխականը այս գի- տակցութեան հասնելու համար պէտք չունի բնա պատմութիւններ քրքրելու:

1895 թուականի անցքերը միայն ալքի առաջ ունենալը բաւական է: Մասնաւորապէս Անգլիոյ եւ Ռուսիոյ սճրագործ քաղաքականութիւնները՝ իրենց բո- յոր մեքենայութեամբն ու մեղսակցութեամբը պարզուած՝ զիւանագիտական միջոցներու ամենէն եռանդոտ ու միամիտ-կուսակիցներուն մտքերն անգամ թունդ հանե- ցին, եւ զերազանցօրէն հաստատեցին այն յաւիտենական ճշմարտութիւնը, թէ եւրոպական զիւանագիտութիւնը կը ձգտի շահագործել մինչեւ իսկ արիւններու մէջ խեղ- զուող ցեղի մը սարօսփներն ու զժոխային տազնապ- ները:

Եւ չիկայ աւելի ընդվզեցուցիչ, աւելի անբարոյա- կան, աւելի հրէշային արարք մը, քան եւրոպական պետութեանց այն պաշտօնական խաբէութիւնը, որով զրահաւորուած՝ մարդկութեան, քաղաքակրթութեան, քրիստոնէութեան եւ զեռ ուրիշ ամէն նուիրական զգա- ցումներու անունով կը վազեն հօն՝ ուր, իրապէս, օտ- թով ձեռքով նետուած են միմիայն իրենց մէկ հաշիւը կարգադրելու, իրենց քաղաքական մէկ հակառակոր- դին այս կամ այն ծրագիրը ջուրը ձգելու մտահո- զութեամբ:

Քանի քանի առիթներով Անգլիան ինքզինքը հայ- կական հարցով ամենէն աւելի հետաքրքրուող մը ցոյց տուաւ: Սան Ստեփանօի դաշնագրութեան ատեն տակն

ու վրայ եղաւ, Պեղինի համաւաւոր յօդուածին խրժ- բագրութեան մէջ է՛ն մեծ դերը խաղաց, կիպրոսի պաշ- նագրութեան մէջ ալ հայկական խնդիրը չի մոռցաւ, ու այս ամենը միայն անոր համար որ ինպատար իր շահերուն կարող ըլլայ Ռուսիոյ օտնձգութիւններուն արգելք հանդիսանալ, անդամալուծել զանի, և Հայաս- տանի վերաբերութեամբ անոր քաղաքական դիտումները խանդարել:

Եւ եթէ Հայաստանի վերջին խառնակութեանց մի- ջոցին ինքը եղաւ նորէն հայկական հարցը յուզողներէն առաջինը, պատճառը հայասիրութիւնը չէր, այլ՝ իր կրած երկիւղը, թէ հայկական զէպքերը կրնան գուցէ միջազգային ընդհարում մը առաջ բերել և թէ՛ մանա-ւանդ, Ռուսիա կրնայ գործնական միջամտութիւն մը ունենալ:

1895ին, երբ Հայաստանը կ'արիւնստէր աշխարհիօ ամենէն պճալի ոճքագործին հրամանով, երբ հայ կտրիճներ կախաղան կը բարձրանային, հայ կիներուն փորէն երախաները օպաննած դուրս կը հանէին, երբ ամբողջ ժողովուրդը մը կը խօղխողուէր, աօղին՝ Անգլիոյ պետական մարդերէն մէկը, Տէլլընչիէի Գուքսը, որ խորհրդարանի նախագահն էր, խօսելով հանդէսի մը մէջ, ցաւ կը յայտնէր, կուրծքը կը կոծէր, ո՛չ թէ ու- ռովհետեւ Հայաստանի մէջ անլուր ու անպատիժ բռու- նաբարոյւններ, զազանութիւններ կը կատարուէին, այլ՝ որովհետեւ քաղաքական անհանգստութեան պատճառով ներքին եւ արտաքին արժէթուղթերու առեւտուրը շատ դանդաղ կ'երթար...:

Ու երբ խօսք կ'անցնէր, որ Հայաստանի մէջ թիրք պաշտօնեաներու տեղ հայեր նշանակուին, Լօրտ Սօ- լըզպըրին հակառակեցաւ, ո՛չ թէ հայկական նահանգ- ներուն մէջ իր մէկ շահը վտանգելու երկիւղով մը, այլ պարզապէս իր Հնդկաստանի մահմետականներուն հա- ճելի ըլլալու և անոնց ցոյց տալու համար, թէ Անգլիան զանազանութիւն չի գնէր իսլամին և քրիստոնէային միջև:

Նուազ շիլ եւ նուազ անարգ չեղաւ անշուշտ Ռուսիոյ ընթացքը:

Ահաօտարակ ուստերուն համար «հայկական հարց»ը շատ վրդովիչ նշանակութիւն ունի:

«Հայկական հարց»ը ո՛չ թէ հայաստանի այլ հայերու հարց մըն է, կրօնն անոնք, հայերու՝ որոնք կ'ապրին թրքական նահանգներու մէջ, Արարատի կուրծքին վրայ, Պարսից օահմանները, Էրզրումի և Թուր- քիայի ամեն կողմերը:

Այս տեսակէտէն գատելով Ռուս օրագրողները պըն- դած են յաճախ, թէ հայկական հարցը ո՛չ թէ նա- հանդներու, այլ՝ ընդհանուր եւրոպական հարց մըն է: Ու այս պատճառը մէջ կը նետեն ամեն անգամ որ Ռուսիոյ ժայրայեղ զգուշաւորութիւնը կամ չկա- մութիւնը արդարացնելու պէտք մը զգան: Ռուսիոյ

աչքին, « Հայաստանը հրդեհ ձգող զրացի մըն է՝ որուն կը յօտենայ ծայրայեղ անհանգստութեամբ ու միշտ անկէ վտանգուելու կանխակալ կարծիքով:

ԾՅԻ կոտորածներուն ատենն էր, Հայկական խնդրին բռնկած միջոցին գարձեալ, երբ Կ. Պոլսոյ Ռուսական դեսպան Նելիտովի կինը՝ «Տէլլի Բրոնիելլ»ին մէջ իր ծանօթ նամակով, առանց տիեզերական խղճմտանքը վրդովող զազանութիւններէն զոնէ սարսուռ մը զգալու, ամենայն պաղարինութեամբ յայտարարեց, թէ Հայերուն համար նահանգային վարչութեան ծրագիր մը տալու վճիռը ա՛յն է, ինչ որ պիտի ըլլար եւրոպայի հրէաներուն վիճակը բարելաւել փորձել կամ լեհական նահանգներուն համար ըֆօրմներ ծրագրել:

Ռուսաստանը, կը գրէր Տիկին Օ. Ա. Նովիկովան, չի կրնար արեւելքի մէջ ամէն բան մտնալ Հայերուն համար. այն տեղ ուրիշ քրիստոնէայ ցեղեր ալ կան որոնք աւելի մօտ են մեզի: Հայերը ո՛չ արիւնով են մեզի մօտ, և ո՛չ ալ հաւատքով...:

Ու աօրկա կնկան մը անհատական կարծիքը չէ: Այսպէս խորհել, այսպէս յայտարարել կը թելադրէ իր գործակատարներուն ա՛յն Ռուսիան, որուն կողմէն օսկայն իշխան Գորչակով՝ 1878 Յուլիո Տի Գոնկրէին մէջ հետեւեալ առաջարկը կը ներկայացներ:

«Քանի որ եւրոպան հանդիսաւոր կերպով համաձայնած էր Պէրլինի դաշնագրին վրայ, ուրիժն դաշնագիրը ստորագրողները պարտաւոր են հսկել որ այդ պայմանները կատարուին մինչև վերջին կէտը: Պետութիւնները իրենց իրենց կը վերապահեն պէտք եղած ժամանակ իրարու հետ համաձայնիլ ինչպէս նաև միջոցներ ձեռք առնել որ եւրոպայի շահերը պաշտպանուին և տէրութեանց արժանապատուութիւնը պահպանուի»:

Այս այն Ռուսիան էր նոյնպէս որուն կողմէն Կոմս Ծուվալով զինուորական ուժի գործադրութիւնը անհրաժեշտ կը հռչակէր և կ'առաջարկէր որ պետութիւնները դաշնագրի յօդուածներուն համար հանդիսաւոր և պարտաւորեցուցիչ երաշխաւորութիւն տան:

Այս օրինանկերը կարելի է տասնապատկել, միշտ հաստատելու համար, թէ բոլոր դաշնագիրները ոչ ինչ են եւրոպական դիւանագիտութեան մօտ, որ յանցաւոր դատաւորութիւն մը, հակամարդկային մեղսակցութիւն մը միայն ներկայացուց՝ մեր արիւնով պահպանուող համար քանի մը զրամատէրներու անհատական շահերը:

Եւրոպան՝ իր պատուսյն վրայ երդուընցած՝ եթէ հարիւրաւոր թուղթեր ալ ստորագրէ, և բարենբրոզման անվերջ ծրագիրներ խմբադրէ, գա՛րձեալ ամենաթեթեւ քաջ մը անգամ չառնէր դէպի գործադրութիւն, մինչև որ չի հարկադրո՞ւթի, չստիպո՞ւթի, յեղափոխական բռնի ուժով:

Ու երբ ազգ մը գործնականապէս ցոյց կուտայ իր ընդդիմութեան աննուաճ ուժը, երբ կը մարմնա-

ւորէ ան յեղափոխական ստիւնը, յարատև ու ամէնուն հանգիստը վրդովող գործունէութիւն մը, այն ատեն, մի և նոյն Եւրոպան՝ առանց նոյն իսկ դաշնագիրներ գտորագրած ըլլալու՝ չորս ոտքով կը վազէ զոհացում մը տալ ապօտաժ ժողովուրդին: Այսպէս կը վկայէ, այսպէս կը հաստատէ մեզի Պօսնայի, Լիբանանի և ուրիշ ազատագրուած երկիրներու պատմութիւնը:

Ինչ որ ալ ըլլայ մեծ պետութեանց դիւանագիտութիւնը, անկարելի է օսկայն յաւակնիլ թէ հայկական հարցը կրնայ ինքնին լուծուիլ՝ առանց եւրոպական ո՛ր և է միջամտութեան:

Մենք մեր դէմն ունինք, ուրեմն ո՛չ միայն թշնամի տածիկը, այլ նաև եւրոպան որ չուզէր տակաւին Սուլթանի սճրագործ կատաղութիւնը օանձահարել:

Տաճիկը կը մերժէ մեզի տալ՝ ինչ որ յափշտակած է մեզմէ, ինչ որ մեր անբանարարելի, անվիճելի իրաւունքն է:

Եւրոպան նոյն պէս կը մերժէ բաւարարութիւն տալ մեր պահանջներուն, զորս ճանչցած, վաւերացուցած է մեկէ աւելի անգամներ:

Երկուքին հետ է մեր գործը, ո՛չ մէկը կրնանք անտեսել, ոչ ալ միւսը:

Եւ ամեն անգամ որ աօրթը կը ներկայանայ, եւրոպային առջեւ ալ կը զնննք մեր ժողովուրդին անմիջական պահանջները: Բայց անոնց իրականացումը կը յուսանք միմիայն մենք մեզմէ: Մեր յեղափոխական գործն է որ պիտի հարկադրէ Եւրոպան գործադրութեան զննել ի՛ր իսկ խոտուածները, զորս յարգելու եւ յարգել տալու համար որոշ պարտականութիւններ ստանձնած է արգէն:

Հակառակ ալ չենք հայկական դատը Եւրոպային ծանօթացնելու ծրագրին՝ ո՛չ ալ հանրային կարծիքը կ'արհամարհենք, հանրային կարծիքը՝ որ իր ամենէն զրգուած վիճակին մէջ իսկ զժազղաբար չի կրցաւ ազդել խորհրդարաններուն վրայ, ուսկից միևնոյն յանկերգը նետեցին Հայաստանը շանթահարող վայրագութիւններէն սրտմտած ժողովուրդին երեսին՝ միևնոյն անպատկառ շնականութեամբ:

«Մենք չենք կրնար գործել մեր երկրի շահերուն դէմ, որոնք վեր են ամէն մարդասիրական զգացումներէ»:

Չենք կրնար ուրանալ որ յունական անկախութեան կոիւն ժամանակը, եւրոպական հանրային կարծիքը մեծ դեր կատարեց:

Եւրոպական հասարակութեանց անգիտակցութիւնը չափէն աւելի կը զիւրացնէ պետութեանց անշարժ ու կամաւոր ձգձգումները: Մանաւանդ՝ ժողովրդային ընդհանուր հակակրօնութիւն մը կրնայ շատ աննպաստ հետեւանքներ արտադրել:

Ասոր համար է որ Սուլթանի կառավարութիւնը՝ Հայաստանի, Մակեդոնիոյ, Ալպանիոյ, և ուրիշ տեղերու մէջ իգործ դրուած թրքական ահաւոր խտրութիւնները շարունակ՝ ըմբոստացնող խեղկատակութեամբ մը՝ բոլորովին տարբեր գոյներով ներկայացնել կը նշկրտի: Ոչ ասիկա՝ ո՛չ միայն լոկ իրողութիւնները ծածկելու ծիծաղաշարժ յամառութեամբ, հապա նակ ընդհանուրին պժգանքը հրաւիրելու համար, որպէս թէ ա՛յն ցեղերուն վրայ, որոնք՝ թշուառութեան ու բռնութեան բոլոր հրէշային արհաւիրքները իրենց կաշիին վրայ կրելով՝ վե՛րջապէս, չեն ուզեր իրենց դահիճին զարշապարին տակ գալարուելով օստկիլ, ու սաքի կանգնած՝ մարդկային ամենատարրական իրաւունքներու տիրացումին կը հետապնդին անվախօրէն:

Այս կարևոր տեսակէտէն դատելով՝ անպէտ ու ապարդիւն չենք նկատեր ա՛յնպիսի պարբերական հրատարակութիւններ, որոնք կոչուած են Հայաստանի օրուան վիճակը պարզել, հայոց պահանջները բացատրել, ու մանաւանդ՝ հայ ցեղին ու հայկական հարցին շուրջ պատահած նպատակաւոր խժժումները ու վճարուած ստութիւնները մերկացնել:

Բայց հայ ժողովուրդը մտքէն իսկ անցնելու չէ, թէ Յեղափոխութեան հարկադրած պարտականութիւնները կատարուած լինեցած կըլլան ատով: Երբէ՛ք:

Այլպիսի դիրին ու անվտանգ աշխատութիւն մը յանձն կանոնեն—աւելի կամ նուազ յարմարութեամբ և յաճախ աչք ծակող ձախաւերութեամբ—մինչև իսկ մարդիկ՝ որոնք, որտանց կ'ատեն յեղափոխութիւնը, բայց չեն յանդգնիր իրենց բովանդակ մաղձը հրապարակաւ թափել անոր պէժ, ու կուզեն իմաստուն հայրենասէրի աժան համբաւ մը շինել՝ որպէսզի երեսունենան քանիմը հարուստներու զոնները պարբերաբար ձեռք առնելով ապրելու:

Պարզապէս հայկական գատին պէժ պաւածանած կըլլան անոնք, որ զօհողութիւններէ խուսափելու մտահոգութեամբ մը, իրենց ժանգոտ խիղճը լռեցնելով, կը յամառին դեռ պնդել, թէ ի նպատակ հայկական գատին բրօքսկանդ մը միայն՝ կրնայ մեր առջև բանալ և հարթել ազգային փրկութեան ֆորժին մեծ և պժուարին ճամբան:

Յեղափոխական նպատակալարմար գործն է միայն որ նոյնպէս կրնայ ուշադրութիւն հրաւիրել մեր խօսքերուն ու գիրերուն վրայ: Առանց զօհողութեան, առանց բռնի միջոցներու, առանց գործնական յեղափոխութեան ոչինչ կրնայ նշանակութիւն ունենալ ո՛չ սուլթանին, ո՛չ ալ եւրոպային առջև:

Ասիկա մտնալու շնորհ: Ու եթէ հայ ազգը չուզէր իր գոյութիւնը շնչուած տեսնել, ժամանակն է որ յեղափոխական գործին շուրջը հաւաքուի, կազմակերպուի՝

որպէս զի, վաղը, իր պատակաւորներուն արտագրած տխուր հետեւանքները յանկարծակի չբերեն իրենք զարձեռալ:

Կուտ, կարգապահ ու միացած ուժերով քաշել պէտք է պէպի նոյն նպատակը, միևնոյն անարգ թշնամիին դէմ: Ու հայ ժողովուրդին՝ մասնաւորապէս հայ երիտասարդութեան՝ պարտականութիւնն է ամէն բանէ առաջ ու ամէն բանէ աւելի ուժ առլ հայ յեղափոխական կրօնին հզօրացմանն ու տեսականութեան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՆՁՁԿԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Պոսթոն, 17 Մայիս, 1902

Պոսթոն, և իր շրջակայի վեց Հնչակեան մասնաճիւղերը միասին, Հնչակեան Միութեան հանդէսը տօնեցին այսօր, ազատութեան այս հինաւորց ուտանին մէջ:

Ամերիկահայ գաղթականութեան համար նմանը չտեսնուած երեւոյթ մըն էր, որ տեղի կ'ունենար:

Իրիկուան ժամը վեցէն սկսեալ, բազմութիւնը սրահ կը վազէր, խուռներամ շարքերով: Հեռաւոր քաղաքներէ բազմաթիւ հայեր Պոսթոն փութացած էին արդէն, առջի օրէն իսկ: Հնչակեան կարգադիր Յանձնախումբը վարձեր էր քաղաքին մեծագոյն ժողովարահներէն մին, որ հազար հօգիէ աւելի ներկայութեան մը համար նստարաններ ունէր: Ու հազար հայ իրարու ջով Հաւաքելը պժուարին, զրգթէ անյուսալի բան մը կը կարծուէր: Երկու հազարի մօտ բազմութիւն մը, ամէն հասակէ ու սեռէ, սրահին դռնէն ներս կը խուժէր ժամանակէն առաջ, աթոռ մը գրաւելու տենջանքով: Հնչակեան Յանձնախումբը՝ այդ անալ կընկալ մարդկային հոսանքիէ առջև՝ ափ ի բերան կը մնար: Հարիւրաւորներ սաքի վրայ կենալ ստիպուած էին, ու շատեք ալ սրահին գուռը կը պատէին, ներս մտնելու անիրականալի ըղձանքով:

Հայ խօսողներէն զատ, հրաւիրուած էին նաեւ ամերիկացի խօսողներ, որոնց երկուքը՝ յարգելի Էտուըրտ Գլէմէնզ, տեղւոյս է՛ն նշանաւոր թերթերէն՝ «Պոսթըն Թրանսքրիբըր» խմբագիրը և միւսը՝ համբաւաւոր ազատական խօսող՝ Ուիլերմ կերիտըն, անձամբ պատաս

խանած էին:

Հնչակեան Յանձնախումբը բնաւ ջանք չէր խնայած սրահը պէտք եղած շքեղութեամբ զարդարելու: Բեմին խորանաձեւ կեդրոնէն կախուած էր ձեռագործ կարմիր ծաղիկներով կանաչ պատտառակալի վրայ խոշոր տառերով յորինուած ՀՆԶԱԿ անունը, որուն վրայ կամարաձեւ կը բարձրանար «Ազատութիւն կամ Մահ» վերտառութիւնը:

Ժամը ութն էր, և տակաւին ժողովուրդին հոսանքը չէր դադարած: Ներքը անհամբեր կը ծափահարէին ժողովի բացուելուն համար, ու դուրսէն նորեկները իրենց ոտքը դնելու տեղ մը կը փնտռէին:

Ժողովը բացուեցաւ ամերիկական ազգային նուագով: Նուագախումբ մը վարձուած էր, հանդէսին փայլը կատարեալ ընելու համար:

Ժողովին ատենապետ՝ Պ. Կ. Փափազեան կարդաց նամակները այն հրաւիրեալ նշանաւոր ամերիկացիներուն, որոնք՝ հակառակ իրենց բաղձանքին՝ չէին կրցած ներկայ գտնուիլ այս հանդէսին:

Նշանաւոր քարոզիչ՝ Էտուրթ Նորթըն կը գրէր. «Դուք և շատ ուրիշներ՝ հաւատար խանդով՝ ազնիւ ջանքեր կ'ընէք կոր հայկական դատին համար: Ոչ թէ միայն լաւ արդիւնք պիտի ունենայ ձեր հայրենասիրական ընկերութիւններու շարունակած այս մասնաւոր շարժումը, այլ ես կը հաւատամ, թէ ամբողջ աշխարհին մէջ՝ ժողովուրդային ընդհանուր յուզում մը՝ տիեզերական օգնութիւն պիտի բերէ: Ազատութեան ոգին ամենուրեք կը տիրապետէ որ չի կրնար ճնշուիլ:»

